# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՋՀԲՄ ԱՇՁԲ 2017/2

ք. Երևան

«22» սեպտեմբերի 2017թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ», ի դեմս գործադիր տնօրեն **Աշոտ Կիրակոսյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **Արխովշին ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Արամայիս Գրիգորյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է, սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված *«Ջերմուկ համայնքում աջափնյա թաղամասի բակային տարածքների բարեկարգում և բակային ճանապարհների ասֆալտապատում, եզրաքարերի տեղադրում»* աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ *մինչև 2017թ. դեկտեմբերի 15-ը*:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

### 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել կատարված աշխատանքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետում նշված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանել թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ այն ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար;

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ **ծավալաթերթ-նախահաշվին (Հավելված 1) և նախագծին (Հավելված 5) համապատասխան:**

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկումներ [illegible] սարքավորման համալիր փորձարկումներ:

3.4.4 Աշխատանքի [illegible] Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, [illegible] պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի [illegible] սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի [illegible] կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է, իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքների կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման [illegible]՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է, պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **147,000,000 (մեկ հարյուր քառասունյոթ միլիոն) ՀՀ դրամ, որից 24,500,000 (քսանչորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ**-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ **մինչև 35,000,000 (երեսունհինգ միլիոն) ՀՀ դրամ, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:**

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվել է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ· ՄԳ/ԼԳxՕԳՏxՕ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագող Կողմերի պայմանագրային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հանդիպակաց պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս բնորոշած մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքի ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ,

համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1, և 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
ՀՀ՝ 1510032335590100
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Արհովշին» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ., 17/1 շենք, բն. 14
ՀՎՀՀ՝00110978
ՀՀ՝ 1150007143333380
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Տնօրեն
Արամայիս Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված թիվ 1*
*«23» նոյեմբերի 2017 թ. կնքված*
*ՋՀԲՄ ԱՇՁԲ-2017/2 ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[1]*

## «Ջերմուկ համայնքում աջափնյա թաղամասի բակային տարածքների բարեկարգում և բակային ճանապարհների ասֆալտապատում, եզրաքարերի տեղադրում» աշխատանքների կատարման

| NN | Աշխատանքների անվանումը | չ/մ | ծավալը | Միավորի արժեքը | Ընդամենը /հազ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | Բարեկարգման աշխատանքներ | | | 0.000 | 0.00 |
| | Փոքր ֆուտբոլի դաշտ (25,24x13,62)մ | | | 0.000 | 0.00 |
| | Տարածքի նախապատրաստական աշխատանքներ | | | 0.000 | 0.00 |
| 1 | Բնահողի հարթեցում | $մ^2$ | 350 | 0.273 | 95.72 |
| 2 | Խճի շերտ | $մ^2$ | 350 | 1.453 | 508.67 |
| 3 | Ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ | $մ^2$ | 350 | 5.375 | 1881.15 |
| 4 | Եզրերի և տակդիրների բետոնե շերտ B12.5 դասի բետոնից | $մ^3$ | 2.5 | 39.982 | 99.96 |
| | Արգելապատ (մետաղական կառուցվածք) | | | 0.000 | 0.00 |
| 5 | Մետաղական կանգնակներից (տիպային կտրվածքի) ցանկապատի տեղադրում (սյուների ամրացմամբ, բետոնացմամբ) 0.1$մ^3$ բետոնի ծախսով 1 հատին | հատ | 44 | 9.303 | 409.32 |
| 6 | (120x180)սմ, 2մմ հաստությամբ պողպատե կանգնակների արժեքը | կգ | 44 | 8.712 | 383.35 |
| 7 | (120x130)սմ, 2մմ հաստությամբ պողպատե կանգնակների արժեքը | կգ | 25 | 7.238 | 182.40 |
| 8 | (120x80)սմ, 2մմ հաստությամբ պողպատե կանգնակների արժեքը | կգ | 10 | 5.804 | 58.04 |

*Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է, ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9 | (80x50)մմ, 2մմ հաստությամբ պողպատե կանգնակների արժեքը | գմ | 41 | 4.021 | 164.87 |
| 10 | (50x50)մմ, 4մմ հաստությամբ պողպատե խողովակի արժեքը | գմ | 16 | 2.413 | 38.60 |
| 11 | 2մմ հաստությամբ անկյունային կանգնակի արժեքը | գմ | 9 | 5.804 | 53.98 |
| 12 | (120x80)մմ մետաղական կանգնակի արժեքը | գմ | 14 | 5.804 | 82.99 |
| 13 | Ներդիր էլեմենտներ | տն | 0.094 | 908.530 | 85.40 |
| 14 | Մետաղական մակերևույթների 2 շերտ ներկում գունավոր ներկով | մ² | 80 | 1.207 | 96.52 |
| | Արգելապատ (փայտային մաս) | | | 0.000 | 0.00 |
| 15 | Վերամշակված փայտից արգելապատի ճաղաշարերի պատրաստում | մ² | 109 | 15.855 | 1728.17 |
| | Սպորտ ինվենտար | | | 0.000 | 0.00 |
| 16 | Բասկետբոլի օղակ (կ-տ) | հատ | 2 | 22.535 | 45.07 |
| 17 | Ցանց բասկետբոլի | հատ | 2.000 | 8.112 | 16.22 |
| 18 | Ֆուտբոլի դարպասի ցանց | կ-տ | 1 | 141.043 | 141.04 |
| 19 | Արհեստական խոտածածկույթ | մ² | 358.4 | 7.165 | 2568.07 |
| 20 | Վատինա | մ² | 365.85 | 0.178 | 65.22 |
| 21 | Հատուկ սոսնձանյութ | կ-տ | 2.6 | 52.007 | 135.22 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 22 | Ավազ մաղած | մ³ | 7 | 5.988 | 41.92 |
| 23 | Դյուբել | հատ | 186 | 0.402 | 74.79 |
| 24 | Ներկանյութ | կգ | 6 | 2.681 | 16.08 |
| | Նստարաններ և աղբամաններ | | | 0.000 | 0.00 |
| 25 | Նստարանների տեղադրում | հատ | 6 | 44.151 | 264.91 |
| 26 | Աղբամանների տեղադրում | հատ | 4 | 5.651 | 22.61 |
| | Էլեկտրալուսավորություն | | | 0.000 | 0.00 |
| | Մոնտաժային աշխատանքներ | | | 0.000 | 0.00 |
| 27 | Մետաղական արկղ 600x600x250մմ չափերի | հատ | 1 | 47.962 | 47.96 |
| 28 | Անջատող երկբևեռ-100Ա | հատ | 1 | 33.584 | 33.58 |
| 29 | Ավտոմատ անջատիչ միաբևեռ 50Ա | հատ | 2 | 5.293 | 10.59 |
| 30 | Լուսատու ЖКУ 99-250, ДНаТ-250լամպով | հատ | 8 | 22.560 | 180.48 |
| 31 | Հենասյուն (Ø102*4.մմ, L=8մ, m=77կգ) | հատ | 4 | 51.909 | 207.64 |
| 32 | Հաշվիչ՝ բազմասակագնային միաֆազ 60Ա | հատ | 1 | 24.939 | 24.94 |
| 33 | Վահանակ ЩМ-1 2հատ 6Ա ապահովիչներով | հատ | 4 | 7.379 | 29.52 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 34 | Տուփ միջանցիկ У996 | հատ | 4 | 0.670 | 2.68 |
| 35 | Բետոնե նախապատրաստական շերտի պատրաստում B10 դասի բետոնից | մ³ | 0.3 | 38.074 | 11.42 |
| 36 | Ե/բ հիմքերի պատրաստում B15 դասի բետոնից, հենասյուների համար | մ³ | 1.2 | 60.345 | 72.41 |
| 37 | Մանրահատիկ բետոնի լցում պատյանի եւ հենասյան միջեւ | մ³ | 0.04 | 126.010 | 5.04 |
| 38 | Ամրան Ø10AIII | տ | 0.0160 | 392.806 | 6.28 |
| 39 | Վինիպլաստե Φ50մմ խողովակի տեղադրում | գմ | 54 | 1.415 | 76.43 |
| 40 | Ճկախողովակ վինիպլաստե Φ50մմ տեղադրում | գմ | 8 | 1.415 | 11.32 |
| 41 | Մալուխ ալյումինե АВВГ 3x10մմ² հատվածքով /խրամուղում/ | գմ | 70 | 0.657 | 45.98 |
| 42 | АПВ 1x2.5մմ² հատվածքով լարի անցկացում | գմ | 90 | 0.158 | 14.22 |
| 43 | Բարձակ երկճյուղ (Ø48x3.5մմ, L=2x3մ, m=23կգ) | հատ | 4 | 30.161 | 120.64 |
| 44 | Պատյան (Ø127*4մմ, L=1մ, m=12.13կգ) | հատ | 4 | 20.826 | 83.30 |
| 45 | Մալուխի ծայրերի չոր հարդարում | հատ | 10 | 2.588 | 25.88 |
| 46 | Հենասյուների ներկում էմալով 2 շերտ. | մ² | 9.6 | 1.208 | 11.60 |
| 47 | Մետաղյա իրեր | կգ | 8 | 0.621 | 4.96 |
| 48 | IV կարգի գրունտի քանդում խրամուղում | մ³ | 18 | 4.081 | 73.47 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 49 | IV կարգի գրունտի բանդում փոսորակներում | մ³ | 4 | 7.742 | 30.97 |
| 50 | Մշակված գրունտի բարձում եւ տեղափոխում 13կմ 9մ3 | տ | 17.1 | 3.589 | 61.37 |
| 51 | Ետլիցքի իրականացում տեղի գրունտով | մ³ | 13 | 1.182 | 15.37 |
| 52 | Պողպատե թերթավոր 200x200x8 (m=2.5կգ) 4հատ | տն | 0.01 | 780.822 | 7.81 |
| 53 | Ավազից անկողնակի պատրաստում 1 մալուխի համար | մ | 64 | 0.266 | 17.04 |
| 54 | Ավազի արժեքը | մ³ | 5 | 2.681 | 13.40 |
| 55 | Ազդանշանային ժապավեն | քմ | 10 | 0.087 | 0.87 |
| | Խաղադաշտ (25x47)մ չափերի | | | 0.000 | 0.00 |
| | Սալվածք խաղադաշտի շուրջը | | | 0.000 | 0.00 |
| 56 | Խճի շերտի պատրաստում սալվածքի տակ 10սմ. հաստ. | մ³ | 39.800 | 13.713 | 545.78 |
| 57 | 150x300սմ չափերի բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով | քմ | 134.00 | 6.553 | 878.04 |
| 58 | Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 5սմ հաստությամբ | մ² | 398.00 | 5.523 | 2198.21 |
| 59 | Խաղադաշտի խճային հիմքի պատրաստում 10սմ. հաստ. /1050մ2/ | մ³ | 105.000 | 13.713 | 1439.87 |
| 60 | Ավազե նախաշերտի պատրաստում 7սմ հաստ. | մ³ | 73.500 | 3.749 | 275.52 |
| 61 | Արհեստական խոտածածկույթից խաղադաշտի պատրաստում | մ² | 1050.000 | 7.165 | 7523.65 |
| 62 | Խաղադաշտի նստարաններ | հատ | 12.00 | 44.151 | 529.81 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 63 | Խաղադաշտի աղբամաններ | հատ | 10.00 | 5.651 | 56.51 |
| 64 | Խաղահրապարակների 150x300մմ չափերի բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով | գմ | 96.00 | 6.553 | 629.04 |
| 65 | Խաղավայրի շերտի պատրաստում /կարմիր շլաք/ 7սմ հաստ. /144մ2/ | մ³ | 10.10 | 2.397 | 24.21 |
| 66 | Խճի շերտի պատրաստում զրուցատաղավարների տակ 12սմ. հաստ. | մ³ | 7.700 | 13.713 | 105.59 |
| 67 | 150x300մմ չափերի բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով | գմ | 74.00 | 6.553 | 484.89 |
| 68 | B-7.5 դասի բետոնից նախապատրաստական շերտ 10սմ հաստությամբ | մ³ | 7.400 | 36.165 | 267.62 |
| 69 | Ց/ավազի չոր խառնուրդի պատրաստում 50մմ հաստ. | մ³ | 3.700 | 13.332 | 49.33 |
| 70 | Բետոնե ձևավոր սալիկներից հատակի պատրաստում | մ² | 74.000 | 5.910 | 437.36 |
| | **Մետաղական ցանկապատ** | | | 0.000 | 0.00 |
| 71 | Առկա քայքայված մետաղական ցանկապատի ապամոնտաժում H=2.5մ /հանձնում պատվիրատուին/ | գմ | 152.000 | 0.495 | 75.26 |
| 72 | Կետային հիմքերի տակ 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով /փոսում տեղում/ | մ³ | 8.000 | 4.313 | 34.50 |
| 73 | Բնահողի ետլիցք ձեռքով, տոփանումով | մ³ | 5.200 | 0.968 | 5.03 |
| 74 | Ավելորդ բնահողի բարձում ավտոինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ | տն | 5.100 | 3.589 | 18.30 |
| 75 | Մետաղական ցանկապատի տակ կետային հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից | մ³ | 2.800 | 57.035 | 159.70 |
| 76 | 100x100x3մմ մետաղական խողովակներից կանգնակների տեղադրում | տն | 1.564 | 59.064 | 92.38 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | /173.4կգ/ | | | | |
| 77 | 100x100x3մմ մետաղական խողովակի արժեքը | կգ | 173.400 | 4.498 | 780.01 |
| 78 | 50x50x5մմ մետաղական անկյունակի շրջանակով, մետաղական ցանցով ցանկապատի պատրաստում և տեղադրում H=3մ L=152մ | տն | 2.980 | 80.672 | 240.40 |
| 79 | 50x50x5մմ մետաղական անկյունակի արժեքը | կգ | 607.000 | 1.901 | 1153.70 |
| 80 | Ցանց "Ռաբից" d=2մմ 50x50մմ բջիջներով | մ² | 451.400 | 1.035 | 467.10 |
| 81 | 40x2մմ ներդիր շերտապողպատ, և կանգնակների գլխածածկ 100x100x3մմ | տն | 0.206 | 485.217 | 99.95 |
| 82 | Ցանկապատի մետաղական մասերի 2 շերտ ներկում | մ² | 460.000 | 1.208 | 555.53 |
| | **Ջրուցատաղավարներ, նստարաններ, աղբամաններ, մանկական խաղասարքեր** | | | 0.000 | 0.00 |
| 83 | Ջրուցատաղավարների տեղադրում (3,2x4,2) /գործարանային արտադրանք/ | տեղ | 7.00 | 494.493 | 3461.45 |
| 84 | Նստարանների տեղադրում | հատ | 15.000 | 44.151 | 662.27 |
| 85 | Աղբամանների տեղադրում | հատ | 20.000 | 5.651 | 113.03 |
| 86 | Մանկական խաղասարքերի տեղադրում` սահարան | հատ | 4.000 | 32.966 | 131.86 |
| 87 | Մանկական խաղասարքերի տեղադրում` ճոճանակ | հատ | 4.000 | 34.144 | 136.57 |
| 88 | Մանկական խաղասարքերի տեղադրում` կարուսել | հատ | 4.000 | 141.284 | 565.13 |
| | **Բակային ճանապարհների ասֆալտապատում, եզրաքարերի տեղադրում** | | | 0.000 | 0.00 |
| | Շինարարական աշխատանքներ | | | 0.000 | 0.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Սալվածք | | | 0.000 | 0.00 |
| 89 | Առկա քայքայված ասֆալտաբետոնե, բետոնե շերտերի քանդում /1024մ2/ 8÷10սմ հաստ. | մ³ | 922.00 | 4.131 | 3808.79 |
| 90 | Շինաղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ | տն | 2028.00 | 2.673 | 5421.05 |
| 91 | Խճի շերտի պատրաստում սալվածքի տակ 10սմ. հաստ. | մ³ | 102.400 | 13.713 | 1404.21 |
| 92 | 150x300մմ չափերի բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով | գմ | 862.00 | 6.553 | 5648.29 |
| 93 | Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 5սմ հաստությամբ | մ² | 1024.00 | 5.523 | 5655.71 |
| | Բակային ճանապարհներ | | | 0.000 | 0.00 |
| 94 | Առկա քայքայված ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում /7200մ2/ Hմիջ.=7սմ. | մ³ | 504.000 | 4.131 | 2082.03 |
| 95 | Շինաղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ | տն | 1109.000 | 2.673 | 2964.47 |
| 96 | Խճի շերտի պատրաստում 15սմ հաստությամբ | մ² | 7200.000 | 1.498 | 10784.21 |
| 97 | Խոշորահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ | մ² | 7200.000 | 3.495 | 25166.64 |
| 98 | Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 3սմ հաստությամբ | մ² | 7200.00 | 3.185 | 22932.57 |
| 99 | 150x300մմ չափերի բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով | գմ | 1868.00 | 6.553 | 12240.14 |
| | Ընդամենը | | | | 132813.19 |
| | Այդ թվում սարք. | | | | 5068.98 |
| | Ընդամենը | | | | 127744.21 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Շահույթ | 11% | | | 14051.86 |
| Ընդամենը | | | | 146865.05 |
| ԱԱՀ | 20% | | | 29373.01 |
| Ընդամենը | | | | 176238.06 |

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Ջերմուկ համայնքում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
ՀՀ՝ 1510032335590100
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Արևմշին» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ., 17/1 շենք, բն. 14
ՀՎՀՀ՝00110978
ՀՀ՝ 1150007143333380
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Տնօրեն
Արամայիս Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 3*
*«23» սեպտեմբերի 2017 թ. կնքված*
*ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2017/2 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | |
| | | | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45231177 | «Ջերմուկ համայնքում աջափնյա թաղամասի բակային տարածքների բարեկարգում և բակային ճանապարհների ասֆալտապատում, եզրաքարերի տեղադրում» աշխատանքների կատարում | 147,000,000 | 147,000,000 | 147,000,000 | 147,000,000 | 147,000,000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Վ.Ռայնեցու 31
ՀՎՀՀ՝ 00846441
ՀՀ՝ 1510032335590100
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Արխավշին» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ., 17/1 շենք, բն. 14
ՀՎՀՀ՝ 00110978
ՀՀ՝ ՀՀ՝ 1150007143333380
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Տնօրեն
Արամայիս Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 4*
*«23» սեպտեմբերի 2017 թ. կնքված*
*ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2017/2 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| գտնվելու վայրը | գտնվելու վայրը |
| հհ | հհ |
| հվհհ | հվհհ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*§ /§ ; 20 Ã.*

Պայմանագրի /այսուհետ` Պայմանագիր/ անվանումը`
Պայմանագրի կնքման ամսաթիվը` « » « » 20 թ.
Պայմանագրի համարը`
Պատվիրատուն` ի դեմս և
Պայմանագրի կողմը` ի դեմս , հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. կազմված` գնման հայտը նախապծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված` ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին` կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները`

| N | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Կատարված աշխատանքի քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքն ընդունեց |
|---|---|
| ստորագրություն | ստորագրություն |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 4.1*
*«22» սեպտեմբերի 2017 թ. կնքված*
*ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2017/2 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ________________-ի
Պատվիրատուի անունը / Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ________________ին կնքված N ________________
պայմանագրի կնքման ամսաթիվը / պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ________ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________
ազգանուն, անուն

________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________
ազգանուն, անուն

________________
ստորագրություն

*Հավելված 5*
*«23» սեպտեմբերի 2017 թ. կնքված*
*ԶՀԲՄ-ԱՇՁԲ-2017/2 ծածկագրով պայմանագրի*

Նախագծին